

Մ.-ՅՈՎ. ՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Շարունակենք առաջ բերել այդ դպրոցի շուրջը մի խումբ խոտ-
վարարների և ինտրիգանների ստեղծած դաւերի մերկացումները:

Նամակներ «Մշակի» խմբագրութեան

I

Քիֆլիս, 29 յուլիսի

Խնդրեմ զետեղէք «Մշակի» մէջ երկտողս այն բանակուռի-
առիթով, որը կատարուած է «Ալիք» լրագրի խմբագրութեան և
պ. Լ. Սարգսեան միջև՝ վերջինս Յոֆլանեան դպրոցի տեսուչ
ընտրելու պատճառով:

Ես հարկաւոր եմ համարում հաղորդել մի քանի փաստեր,
որոնք յայտնի են ինձ և կատարուել են պ. Սարգսեանի տեսուչ
ընտրուելուց առաջ:

Անցեալ յուլիս ամսին, օրը չեմ յիշուած, մի քանի ծա-
նօթների հետ ունեցանք խօսակցութիւն Յոֆլանեան դպրոցի
մասին: Նրանք յայտնեցին, թէ Յոֆլանեան դպրոցի հոգա-
բարձութիւնը տեսուչ է ընտրելու մօտ ժամանակներում և որ
լաւ կը լինի, եթէ այդ պաշտօնի համար հրաւիրուի պ. Սար-
գսեանը, որը ցոյց է տուել հմտութիւն և ձիրք դպրոց կառա-
վարելու մէջ: Ես ևս մօտ ծանօթ լինելով պ. Սարգսեանի հետ
և յիշելով նրա համբաւը, երբ նա Շուշու թեմական դպրոցի
տեսուչ էր, ունեցայ դէպք խօսելու այդ մասին թեմիս ս. ա-
ռաջնորդի հետ և հոգաբարձուներից պ. Երէցփոխանի հետ,
որոնք համակրանքով վերաբերուեցին այդ մտքին: Ս. առաջ-
նորդը յայտնեց ինձ, որ ինքն էլ երկար մտածել է Յոֆլա-
նեան դպրոցի տեսուչ ընտրելու հացի մասին և եկել է այն
եզրակացութեան, որ պ. Սարգսեանը արժանաւոր թեկնա-
ծու է:

Այս դէպքերից յետոյ միայն ես, պատահելով պ. Սարգսեանի
հետ, յայտնեցի նրան ս. առաջնորդի և պ. Երէցփոխանի
կարծիքը.—նա ինձ ասաց, որ կընդունի Յոֆլանեան դպրոցի

տեսչի պաշտօնը, եթէ լինի ակաջարկութիւն հոգաբարձութեան կողմից:

Ահա թէ ինչէ յայտնի ինձ յիշեալ խնդրի մասին և ինչ հանգամանքներ են տեղի ունեցել՝ նախ քան պ. Սարգսեան ստացել է առաջարկութեան Յոֆլանեան դպրոցի հոգաբարձութիւնից և հաստատուել տեսուչ:

Ս. Յարութիւնեանց

II

Թիֆլիս. 11 օգոստոսի

Հինգշաբթի, օգոստոսի 10-ին, նշանակուած էր Յոֆլանեան-Մարիամեան դպրոցի հոգաբարձութեան ընտրութիւնը կատարող 12 պատուիրակների ժողովը, որ բաղկացած էր 9 զուտ դաշնակցականներից և 3 ոչ-դաշնակցականներից:

Ի հարկէ առաջուց յայտնի էր, որ 9 դաշնակցականները չը պէտք է այդտեղ գային իրանց անկախ կամքով և համոզմունքով, այլ իբրև բիւրօից ստացած հրամանի հլու գործակատարներ: Այդպէս էլ եղաւ. գործակատարները կատարեցին անմոռնչ իրանց տրուած հրամանը, թէև հարկ համարեցին մի քիչ կօմբիդա խաղալ (չէ որ, գոնէ արտաքուստ, ձևականութիւնը պէտք է պահել), բաժանելով թերթիկներ, գաղտնի քուէարկութիւն կատարելու:

Բայց հարցը այժմ հոգաբարձութեան մասին չէ. հարցը և նրա մէջ չէ, որ Դաշնակցութեան բիւրօն, անշուշտ առ ի չգոյն մարդկանց, ամեն տեղ խցկում էր իր անզուգական ծակ փաստարան Տ. Յովահաննիսեանի (և Ներսեսեան դպրոց, և Յոֆլանեան դպրոց, և Կարս, և Վաղարշապատ, և Կաղզուան ընտրութիւնների ժամանակ թեկնածու): Ես կամենում եմ հասարակութեան դատաստանին ենթարկել և բողոքել մի որոշման դէմ, որ ընդունեցին պատուիրակների ժողովի 9 դաշնակցականները, մի որոշման, որ ես համարում եմ վտանգաւոր, անկորեկտ և անիրաւական: Պատուիրակներից մէկը՝ պ. Մուշախիձէ հանց գրպանից առաջուց պատրաստուած մի բանաձև, որով առաջարկուած էր հրահանգ տալ նորընտիր հոգաբարձութեան ապօրէն ճանաչել Յոֆլանեան-Մարիամեան դպրոցի այժմ պաշտօնավարող հոգաբարձութեան բոլոր կարգադրութիւնը վերջին 2—3 ամսուայ ընթացքում, առարկելով թէ այդ կարգադրութիւնները կաշկանդում են եկող հոգաբարձութեան գործունէութիւնը:

Ես սաստիկ բողոքեցի ոչ թէ միայն այդ բանաձևի դէմ, ըստ

էութեան, այլ և այն բանի դէմ, որ պատուիրակների ժողովը իր քննութեան առարկայ է դարձնում այդպիսի մի առաջարկութիւն: Եւ բողոքեցի հետևեալ հիմունքներով. 1) մեզ ընտրող ծխական ժողովուրդը երեք եղեղեցիներում էլ (Մողնի, Վանք, Բեթղեհէմ) մեզ պատուիրակներին տուել է միայն մի մանդատ—ընտրել հոգաբարձուներ. 2) ընտրողական ծխական ժողովներում այդպիսի հարց չէ արժարծուել երբէք, չէ քննուել, հետևաբար, և մենք պատուիրակներս իրաւունք չունենք այդ հարցը այժմ յարուցա ել, քանի որ լիազօրուած չենք. 3) ամենատարրական արգարութիւնը պահանջում է, նախքան հոգաբարձութեան որևէ է կարգադրութիւնը ապօրէն ճանաչելը, քննել գործերը, լսել և հոգաբարձութեան բացատրութիւններն ու փաստերը, որոնք գուցէ ջախջախիչ լինեն և ցոյց տան, թէ նրա բոլոր կարգադրութիւնները օրինաւոր են:

Վերջապէս ես յայտնեցի և այն, որ նոր հոգաբարձութեան կարելի է յանձնարարել միայն մի բան—ծանօթանայ գործի հետ և եթէ կը գտնէ ապօրէն կարգադրութիւններ, զեկուցանել դրանց մասին պատուիրակների կամ ծխականների ժողովին և նրանից ստանալ հրահանգ ինչպէս վարվել: Տալ նորընտիր հոգաբարձութեան առաջուց պաշտօն՝ ապօրէն ճանաչել իր նախորդի կարգադրութիւնները—դա ոչ միայն նշանակում է բռնանալ նրա մտքի, համոզման և խղճմտանքի վրայ, այլ և շատ վտանգաւոր ինցիդիւտներ ստեղծել և զանազան չարիքների դուռ բանալ:

Սակայն Թ դաշնակցական-մեքենաները միայն մի բան գիտէին—հրաման էին ստացել քուէարկել այնպիսի բանաձև և քուէարկեցին: Մենք երեքս, (ես, Արասխանեան և իշխանուհի Արղութեան) մտցնել տալով մեր կարծիքը արձանագրութեան մէջ, հեռացանք:

Ես մի աւելորդ անգամ էլ համոզուեցի, թէ ինչպիսի մարդ-մեքենաներ գիտեն ստեսծել դաշնակցականները, և նրանց նոյն իսկ լաւագոյն ոյժերը, փաստաբանները, չը գիտեն այն կոպիտ, տարրական ճշմարտութիւնը, թէ չէ կարելի դատապարտել որևէ մի անձն, առանց լսելու նրան, առանց գործը քննելու, ծանօթանալու:

Պատուիրակ՝ Հ. Առսքելեան

III

Անվերջ ստախօսութիւններ

Մեր գրական Հաջի-Բաբանները բանակուռի բռնուելով երբէք ըստ էութեան բան չեն կարողանում ասել և աշխատում են մի կերպ խուժանի առջև իրանց յաղթող ձևացնել:

Իմ «Սուժանապետներին»! յօդուածում չէր տուած «արդի Իաշնակցութեան բիւրօկրատներին» հասցէն, բայց և այնպէս սլաքը դիպել էր նպատակին... Եւ ահա ըստ էութեան բան պատասխանելու փոխարէն, «Ալիքի» ղեկավարները փողոցային տղերանց նման, ըստ սովորութեան, կրկնում են նոյն հայհոյանքները, յաղթական ծամածռութիւններով ասում. «է՛ր, վախեցար մեր անունը տալ, դէ գնա. յաղթեցինք, յաղթեցինք... Խեղճեր...»

Այդ փրկարար սրտահովութիւնը, ինչպէս և հայհոյական «բելլետրիստիկայի» մէջ անվերջ վարժութիւններ անելը, թողնելով մեր երեւելի գրական Հաջի-Բաբաններին՝ անցնենք: Նախ քան բուն հարցին դիմելը, հարեանցի կերպով ներկայացնեմ մի նոր գրպարտութիւն. իբր թէ ես այդ պարոնների արարքները ս'սեցի մերկացնել միմիայն իմ տեսչական հարցից յետոյ: Թէ ես տարի ու կէս է բոլոր ժողովներում, դաշնակցական շէֆերի ներկայութեամբ, խիստ բացասական քննադատական դիրք եմ բռնել դէպի այդ ազգային բիւրօկրատների տակուիկան և արարքները—այդ պէտք է որ, վերջապէս, քաղաքացիական քաջութիւն ունենան վկայելու մեր այն ինտելիգենտները, որոնք տխուր դեր են սանձնել լինելու դաշնակցականների համար լոկ օգնութեան խողովակ: Թէ մամուլի մէջ ես քննադատական-բացասական դիրք եմ բռնել դէպի դաշնակցութիւնը այն օրից, երբ ցենզուրական պայմանները փոփոխուեցան և ազգային բիւրօկրատները դուրս հիկան կոնսպիրատիվ դիրքից հրապարակ, սեփական օրգան հիմնացին, ցուցածուրական բեկլամներ սկսեցին հրատարակել իրանց՝ «շտարի», «զօրքի», «կուռ ոյժի», «գառաստանական», «պաշարողական» և այլն կարգադրութիւնների մասին տպած թողցիկներով, հրամաններով և այլն—այդ պէտք է յայտնի լինի բոլորին, որոնք կարդում են «Մուրճ» ամսագիրը: Հետևաբար, թէ ժողովներում և թէ մամուլի մէջ ես քաղաքական քաջութիւն եմ ունեցել չը ծածկել իմ համոզմունքները և կարծիքները: Վեր կենալ այժմ խուժանին դրդելու համար բանը այնպէս ներկայացնել թէ ես հրապարակ եմ դուրս եկել իմ տեսչական հար-

ցից յետոյ—դա դիտաւորեալ ստախօսութիւն է. մի բան, որ դառել է երկրորդ ընդթ ազգային բիւրօկրատներէ դ համար, շնորհիւ այն հանգամանքի, որ ինտելիգենտ խողովակները ներողամիտ ընքշութեամբ են վերաբերուել դէպի ձեր բոլոր պակասութիւնները և դուք երես էք առել...

Մի նմուշ էլ «Ալիքի» զեկավարների լոգիկայից: Եթէ դուք ասէք, օրինակ, «Ռուս բիւրօկրատներ, ես այն էլ գիտեմ, որ դուք չէք տարբերում սպիտակը սևից, շունը՝ գայլից և այլն»—միթէ դա նշանակում է թէ՛՝ ուսները սև են կամ գայլեր են. իսկ «Ալիքի» միւսիօ խմբագիրը ընդունակ է այդպիսի լօգիկական սայլտօմորտալնների: Չէ՞ք հաւատում. կարդացէք իմ «Ալիքի» մանեօվրները» յօդուածի վերջին պարբերութիւնը և տեսէք թէ ի՞նչ պրովոկատորական մետամորֆոզի են ենթարկւում խօսքերս «Ալիքի» վարած բանակոտի մէջ: Ո՛չ պրովոկատորը վերև բերած օրինակ-նախադասութիւնից պէտք է միայն եզրակացնի, որ ոռւս բիւրօկրատները այնքան թիւր, տհաս, սխալ «հասկացութիւն» ունեն, որ չեն զանազանում իրարից շատ տարբեր հասկացողութիւնները... Այդ է պահանջում լոգիկան, որ պարտադիր չէ համարում «Ալիքի» խմբագրութեան մէջ.

(Մշակ № 163)

Լ. Ս.

IV

Ա. Զ. Դ

Մ-Յովնանեան օր. ուսումնարանի տեսչի կողմից

Յուլիս 6-ին գրած բացատրութեանս մէջ («Մշակի» № 146) ես ասել էի հետեւալը. «Մինչև օգոստոսի 1-ը պէտք է վերջացած լինի հոգաբարձութեան ընտրութեան խնդիրը, որովհետև ուսուցչական խմբի լաւ կազմ ունենալու հարցը կապ ունի և ժամանակի հետ. օգոստոս ամսում արդէն դժուար է ընտրութիւններ անել. մանկավարժական լաւ ոյժերը տեղաւորուած են լինում»:

Ես սպասեցի աւելի քին մի ամիս. անցաւ և իմ դրած պայմանաժամը. հոգաբարձութեան ընտրութիւնը և հաստատութիւնը կարող է դեռ շարաքններ տեւել: Ես բարոյական պարտքս եմ համարում այժմ և եթ ձեռնամուխ լինել ուսուցչական խմբի կազմութեան, որովհետև յետաձգել նշանակում է զոհել դպրոցի շահերը հայկական անմիտ խռովասիրութեան: Սեպտեմբեր, 1906.

Մի ամսից աւելի ժամանակ էր տրուած, որ բծախնդիր խռովասէրները վերջացնէին իրանց հաշիւները: Հին հոգաբարձութիւնը, ինչպէս պարզուեց գործերի ծանօթութիւնից, պաշտօնավարութեան մէջ մտել է սեպտեմբեր ամսում. այս սեպտեմբեր ամսում լրանում է նրա պաշտօնավարութեան երեք տարին. բացի այդ, իւրաքանչիւր կօլլեգիա օրինաւոր կերպով շարունակում է իր ֆունկցիաները, մինչև որ չէ գալիս նրան վոխարինող մարմինը: Այդ մարմինը դեռ չը կայ, և անորոշութեան մէջ թողնել դպրոցական գործը օգոստոսի համարեա կիսում, նոյն է թէ հնթարկել գործը սրա-նրա քմահաճոյքին, Ուսուցչական խմբի կազմութեան ձեւնարկելով խնդրում եմ այդ առիթով ինձ հետ տեսնուել ցանկացողներին դիմել՝ Յովնանեան ուսումնարան իւրաքանչիւր օր ցերեկ, ժամի 1¹/₂ 3¹/₂:

(Մշակ № 170)

Հ. Ս.

Թիֆլիս, 8 օգոստոսի

Վ

Դպրոցը պաշարման դրութեան մէջ:

Յովնանեան դպրոցի համար չորս հոգաբարձուներ ընտրող պատուիրակների ժողովի շարունակութիւնը տեղի ունենցաւ հինգշաբթի, ամսիս 10-ին, կէսօրից յետոյ առաջնորդարանում: Ներկայ էին բոլոր 12 ընտրող պատուիրակները: Նախագահում էր սրբազան առաջնորդը:

Ամենից առաջ կարդացուեց հանգուցեալ Յովնանեանի կտակը, որից յայտնուեց այն, ինչ որ արդէն վաղուց յայտնի էր ամենքին, այն է թէ՛ 7 հոգաբարձուներից* չորսը պէտք է ընտրուեն ժողովուրդի կողմից, մէկը պէտք է լինի հանգուցեալի ժառանգներից մէկը, միւսը՝ սրբ. առաջնորդը և եօթերորդը կուսանաց վանքի մայրապետը:

Կտակի ընթերցումից յետոյ, հարց յարուցուեց, թէ արդե՞րբ նախ խօսել այն մանդատի մասին, որով ցանկալի է, որ

*) Կտակում «հոգաբարձու» կոչումը վերապահած է միայն Անանովի տանից արական ճիւղի մէջ աւագագոյնին (§ 8), իսկ մնացած ընտրովի թէ կտակով անգամները կոչուած են «խորհրդի անդամներ», սակայն գործածութեան մէջ մտել է բոլորի նկատմամբ էլ հոգաբարձու անունը:

ղեկավարուի նորընտիր հոգաբարձութիւնը, և ապա ըն տրու-
թիւններ կատարել, թէ ոչ՝ ընդհակառակը, նախ ընտրութիւն
կատարել և ապա այդ ցանկութիւնները արտայայտել:

Պատուիրակ պ. Տ. Յովհաննիսեանը կատարելապէս վըս-
տան լինելով ընտրութիւնների հետեանքի մասին (12 պատ-
ուիրակներից 9-ը Դաշակցութեան ծխականներ էին) և հա-
մողուած լինելով, որ ընտրուելիք հոգաբարձուներին արդէն
տրուած է «բիւրօյի» մանդատը, շատ անտարբեր կերպով յայտ-
նեց, թէ այդ միւսնոյն է՝ կուզեն, այդ ցանկութիւնների մասին
թող խօսուի ընտրութիւններից առաջ կամ յետոյ:

Որոշուեց նախ խօսել պատուիրակների ցանկութիւնների
մասին և ապա ընտրութիւնները կատարել:

Պ. պ. Արասիանեան և Հ. Առաքելեան այն միտքը յայտ-
նեցին, թէ ընտրող ժողովրդից այդ մասին մանրամասն ման-
դատ չունենալով, պատուրակները անկարող են ընտրուելիք
հոգաբարձուներին առանձին թելադրութիւններ անել, բացի
այն, որ նրանք համապատասխան լինեն իրանց պաշտօնին և
բարձր պահեն իրանց յանձնուած ուսումնարանի դիրքը և այլն:

Սակայն պ. պ. Տ. Յովհաննիսեան և Լիսիցեանը չը բա-
ւականացան այդքանով և առաջինը շատ հետուից, քողարկուած
ու ծուռ ու մուռ ճանապարհներով, իսկ երկրորդը շատ աւելի
համարձակ ու շիտակ կերպով այն միտքը արտայայտեցին, որ
ընտրուող հոգաբարձութիւնը պէտք է պարբերի համարէ պ.
Լ. Սարգսեանի՝ տեսչութեան պաշտօնի հրաւիրուելը և... մնա-
ցածը արդէն յայտնի է:

Այդ պարբերութիւնը նրանք պատճառաբանում էին
նրանով, թէ նախկին հոգաբարձութիւնը հէնց իրանք պարբե-
րի են եղել, նրանց պաշտօնավարութեան ժամանակ վաղուց է
լրացած եղել, ուստի նրանք իրաւունք չունէին ոչ հին ու-
սուցչական խումբը արձակել և ոչ էլ տեսուչ հրաւիրել և այլն,
և այլն, բոլորը ինչ որ արդէն քանիցս անգամ գրուել է «Ալիք»-
ում: Ս. առաջնորդը, իբրև Յովնանեան դպրոցի հոգաբարձու-
ներից մին, բաւական երկար ու մանրամասն բացատրութիւն-
ներ տուեց, ապացուցանելով թէ փաստերն ու իրողութիւնները
բոլորովին այնպէս չեն, ինչպէս որ այդ մասին խօսուած է
դրսում և մաճուլի մէջ: Ս. առաջնորդի պատմածով, նախկին
հոգաբարձուները ճիշտ այն ժամանակներում, երբ հայոց ու-
սումնարանները անցան կառավարութեան ձեռքը, և այդ հոգա-
բարձուներին իրանց պաշտօնի մէջ հաստատել էր ոչ թէ Հայ-
բապետը, այլ ուսումնարանական դիրեկցիան:

Այդ հաստատման խնդրի մէջ էլ մի այսպիսի մանրամաս-

նութիւն է տեղի ունեցել. դիրեկցիան հոգաբարձուներին հաստատած է եղել յուլիսի 3-ին, բայց հոգաբարձութեանը կանչել, հաստատման թուղթը յանձնել և պաշտօնավարութեան են հրաւիրել միայն սեպտ. 3-ին, այնպէս որ նրանց պաշտօնավարութեան ժամանակաշրջանը լրանում է, ոչ թէ յուլիսի 3-ին, ինչպէս դուրսերը թիւրմացութեամբ խօսում ու պնդում են, այլ սեպտեմբերի 3-ին: Ճշմարտութիւնը, — ասաց առաջնորդը, — այդ հոգաբարձուների իրանց ժամանակաշրջանից աւելի ապօրինի կերպով պաշտօնավարութեան մասին խօսք անգան չէ կարող լինել»:

Յետոյ ս. առաջնորդը բացատրեց, թէ ինչու վեհափառը իսկոյն նոր հոգաբարձական ընտրութիւն կատարել չը տուեց, երբ ուսումնարանները վերստին հոգևոր իշխանութեանը վերադարձուցին, այլ նա ընդհակառակը վաւերացրեց դիրեկցիայի կողմից վաւերացրած հոգաբարձուներին, մանաւանդ որ դրանցից մէկը արդէն վախճանուած էր, իսկ միւսը բացակայ:

«Իրա պատճառը, — ասաց առաջնորդը, — պարզապէս այն էր, որ անցեալ դեկտեմբերին, ինչպէս գիտէք, այնպիսի քաղաքական ու հայ-թուրքական հանգամանքներ էին ստեղծուել, որ անհնարին էր ընտրութիւնների մասին մտածել: Իսկ վեհափառը այդ հոգաբարձուներին վաւերացրեց նրա համար միայն, որ նա ուզեց և շտապեց իրապէս Յոյն ուսումնարանը իր իշխանութեան տակ առնել, որպէսզի հոգաբարձուները մի անկախ բան չը մնան և պատասխանատու ճանաչուեն Հայրապետի իշխանութեան առաջ»:

«Ինչ վերաբերում է ուսուցչական խմբի արձակելուն — շարունակեց առաջնորդը, — որի առթիւ ուսուցչական (?) համագումարը, առանց հոգաբարձութեան արձանագրութիւնները կարդալու, առանց խնդրին մօտիկից ծանօթանալու, անազին աղմուկ հանեց և բոյկոտ հրատարակեց, նոյնպէս պատճառներից դուրս և ապօրինի քայլ չէ եղել, ինչպէս որ ենթադրում է: Այդ խումբը հրաւիրուած էր դիրեկցիայի կողմից և իբրև մի ուսանական ուսումնարանի համար, որտեղ բոլոր աւարկանները աւանդում էին ուսանելն լեզուով, և ուրեմն բոլորովին հոգ չէր տարուած այն մասին, որ ուսուցչուհիները հայերէն պիտի գիտենան: Եւ նրանցից շատերը, իսկապէս, չը գիտէին էլ հայերէն: Նրանք նոյնպէս արձակուած պիտի լինէին այն ժամանակ, երբ ուսումնարանները դիրեկցիայից մեր ձեռքը անցան, բայց դարձեալ անպատեհութեան և այլ հանգամանքների պատճառով ուսուցչիչների արձակելը յետաձգուեց մինչև ուսումնական տարուայ վերջը: Իսկ եթէ արձակման թղթի

մէջ ոչ մի պաճառաբանութիւն չը տրուեց, դա էլ ուղղակի ուսուցչուհիներին անպատուութիւն չը բերելու համար էր: Ուսուցչուհիներէ համար, սակայն, գաղտնիք չը պիտի լինէր իրանց արձակուելու պատճառը:

«Եթէ, պարոններ, — աւելացրեց առաջնորդը, — ժողովի իրաւունքների մասին խօսելու, հոգաբարձութեան դէմ բողոքելու և բոյկոտ հրատարակելու խնդիր կար, այդ այն ժամանակ էր, երբ դիրեկցիան տէր ու տնօրինող դարձաւ Յովնանեան ուսումնարանում: Բայց այդպիսի բաներ այն ժամանակ չեղան, այն ինչ երբ ուսումնարանում տնօրինողը մեր հոգևոր իշխանութիւնը եղաւ, այն ժամանակ բողոքելու և բոյկոտների մասին յիշեցին»:

Այս ընդարձակ բացատրութիւններից յետոյ, թւում էր, թէ բողոքի ձայնը բաւական մեղմացաւ և ալլա հիմունքներ չէին մնում նախկին հոգաբարձութեան կարգադրութիւնները *Coute que coute* ապօրինի ճանաչելու, նամանաւանդ որ այդ ժողովը ոչ դատարան էր և ոչ էլ գումարուած էր հին հոգաբարձութեան գործերը քննելու և դատավճիռ կարդալու: Այդ կարծես զգում էին բոլորն էլ, բայց և դաշնակցական-պատուիրակները, ինչպէս պարզ երևում էր, նոյնպէս զգում էին, որ չէ կարելի խնդիրը այդպէս թողնել, որով և Սարգսեան իր տեսչական պաշտօնում վաւերացուած կարող է համարուել, այնինչ «բիւրօն» իր պատուիրակների վրայ պարտաւորութիւն է դրել հէնց այս ժողովում այդ հարցը վերջացնել:

Եւ յիբաւի, պատուիրակների ղեկավար ու խմբագետ պ. Տ. Յովհաննիսեանի մի քանի փաստաբանական քաջբռնկ սովեստութիւններից յետոյ, նրա օգնական պ. Մուշաթեանից հանեց մի բեզօլիւցիա, որ և առաջարկեց ժողովին: Ռեզօլիւցիան մի քանի «ի նկատի ունենալով»-ներից յետոյ նոյն բանն էր ասում, ինչ որ ս. առաջնորդի տուած բացատրութիւններից առաջ ասել էին պ. պ. Տ. Յովհաննիսեան և Ս. Լիւսիցեան, այն է՝ նոր հոգաբարձուները պարտաւոր են անվաւեր ճանաչել հին հոգաբարձուների գալիք ուսումնական տարուայ համար արած բոլոր կարգադրութիւնները, ուսմիօրէն ասած՝ չընդունել և Սարգսեանին տեսուչ: Այդ է դաշնակցականների ամբողջ փորձի ցաւը:

Միանգամայն պարզ էր, որ այդ բեզօլիւցիան կազմուած էր «բիւրօյում» և խստիւ պատուիրուած, որ, ինչ էլ չը լինի, պէտք էր նրան անցկացնել: Այդ պարզ էր, ասում ենք, նրանից, որ բեզօլիւցիան առաջարկողները ոչ միայն չէին կարողանում նրան համարձակութեամբ պաշտպանել, այլև նոյնիսկ

խուսափում էին նրա մասին վիճել, միևնոյն է դուք մեզ չէք յետ կանգնեցրի այդ ընդօրինցիայից,—այսպէս էր մօտաւորապէս Տ. Յովհաննիսեանի փաստաբանութիւնը: «Աւելի լաւ է քուէի դնենք»—շարունակ պնդում էր նա, շատ լաւ հասկանալով որ իրանք՝ երեք խօսող պատուիրակները այնտեղ այլ վեց անխօս պատուիրակ-ընկերներ էլ ունեն, որոնք անհամբեր ձեռք բարձրացնելու բողոքէին էին սպասում:

Բեզօրինցիայի դէմ առարկում են, թէ ընտրող ժողովրդից այդպիսի մանդատ չունեն պատուիրակները, թէ առանց հին հոգաբարձութեան պատասխաններն ու բացատրութիւնները լրօսելու չէ կարելի այդպէս դատավճիռ կարգալ ու զրական կերպով ապօրինի համարել նրա գործերը, թէ այդպիսի քննութիւն ու որողումներ կայացնելը թողնելու է նորընտիր հոգաբարձութեանը, որը գործերին մօտիկ ծանօթանալով ինքն էլ կորոշի իր անելիքը և այլն և այլն:

Բայց ո՞վ էր այդ առարկութիւններին լսողը, «քուէարկութեան դնենք», վասաւամ:

Բեզօրինցիան քուէարկութեան դրուեց և, ի հարկէ, 9 ձայնով ընդդէմ 3- ընդունուեց:

Ժողովում բաւականին անյարմար դրութեան մէջ էր ըզգում իրան պատուիրակ տիկին Ս. Արզութեանը, որը, ինչպէս երևում էր, բոլորովին անծանօթ լինելով «կուսակցական» դիսցիպլինայի, ներկայացուած ընդօրինցիայի երես ու աստառի հետ, ոչինչ չէր կարողանում հասկանալ այդ ժողովից ու շուտօրօր սրա-նրա երեսին էր նայում, չը կարողանալով իրան հաշիւ տալ, թէ ինչպէս կարող են մարդիկ այդպիսի արտուրութեան համնել ու չը քննուած գործերի մասին նախօրօք կտրական վճիռ արձակել, ինչպէս այդ անում են ճիշտ մեր կառավարչական դատարաններում:

Ինչպէս երևում էր, տիկնոջը ամենից աւելի պ. պ. Տ, Յովհաննիսեանի, Լիսիցեանի ու Ալիբէկեանի վարժունքն էր զարմացնում, որոնց մասին, երևի, նա աւելի լաւ գաղափար ունէր:

Սակայն տիկնոջ համար խնդիրը աւելի պարզուեց, հրը ընտրողական կօմիտիան սկսեցին: Իայց այդ կօմիտիան մեզ համար էլ մի այլ բան պարզեց, այն է, որ Դաշնակցութիւնը անանկացած է և այլևս հրապարակի վրայ մարդիկ չունի, որոնց կարողանայ թեկնածուներ առաջարկել. նա կամ հրգեբը վերջացրած աշուղի նման կրկնողութիւններ ու նէյնըմ նէյնըմներ է անում, և կամ լիկվիդացիայի ենթարկուած վաճառակա-

նի նման սկսել է քունջ ու պուճախներում մնացած փասման-դա-ապրանքները հրապարակ հանել:

Մեր խօսքը, ի հարկէ, առաջարկուած ու իրանց 9 ձայնով ընտրուած թեկնածուների մասին է, որոնց անունները երեկ արդէն տպագրուեցին «Մշակ»-ում:

Բոլորովին նորութիւն չէ, որ Դաշնակցութիւնը թեկնածուներ առաջարկելիս երբէք նրանց արժանաւորութիւններն ու պաշտօնին յարմարութիւնները ի նկատի չէ առնում: Նրա համար բաւական է միայն, որ ընտրուողները ճակատին կուսակցութեան «եարլիկ»-ը լինի կպցրած և հնարաւոր լինի նրանց միջոցով նոր նոր նուաճումներ անել:

Եւ նա «փառաւորապէս» նուաճեց Յովնանեան դպրոցը...
(«Մշակ» № 174)

Խ.

VI

Թիֆլիս, 17 օգոստոսի

Ահա ուղիղ երկու ամիս է, ինչ լրագրութեան մէջ և հասարակական զանազան շրջաններում քննուում է Յովնանեան դպրոցի հոգաբարձական, ուսուցչական և տեսչական հարցը:

Այդ հարցը նախ և առաջ հետաքրքրում և վերաբերում է մեզ՝ ծնողներին, որովհետև մեր երեխաներն են, որ այնտեղ սովորում են և սովորելու են, ուստի և մենք ամեն կողմից քննելով այդ մեզ համար կարևոր հարցը՝ եկել ենք հետևեալ եզրակացութեան:

ա) Հոգաբարձական այն կազմը, որ մենք որպէս ծխականներ ընտրել էինք երեք տարի առաջ, նա հաստատուել է և գործունէութեան մէջ մտել. այդ կազմի օրինական ժամանակամիջոցը լրանում է առաջիկայ սեպտեմբերի 3-ին, ուստի և նրա բոլոր որոշումները օրինական են և ոյժ ունեն մինչև սեպտեմբերի 3-ը, և նոյն իսկ աւելի երկար, մինչև որ նոյն օրինական ձևով ընտրուած նոր հոգաբարձական մարմինը գայ և ստանձնէ հնից բոլոր գործերը:

բ) Մենք եթէ ծխական ժողովներում բողոքել ենք, բողոքը վերաբերում էր Յովնանեան դպրոցի հոգաբարձութեան այն իրաւասութեանը, որ նա ստանում էր Կաթողիկոսից յաջորդ եռամեակի համար, առանց որ դրա համար օրինաւոր ընտրութիւններ եղած լինէին:

գ) Ահա այդ իսկ հիման վրայ մենք հոգաբարձութեան այն որոշումը, որով նա տեսուչ է հրաւիրել պ. Լևոն Սարգսեանին, համարում ենք օրինական. ուստի և նրան համարում ենք օրինական տեսուչ Յոզեանեան դպրոցի:

դ) Ուրախ ենք, որ մեզ աջողուեց վերականգնել մեր ծրարական իրաւունքները և այդպիսով սեպտեմբերի 3-ից մենք կունենանք նոր հոգաբարձութիւն, որը և կըվարէ ուսումնական-տնտեսական գործերը համաձայն հանգուցեալ կտակողի կամքի:

ե) Մենք թոյլ չենք տայ, որ դպրոցի մէջ մուտք գործեն այս կամ այն քաղաքական կուսակցութիւնները և դպրոցի մէջ անաջ տարուեն կուսակցական, անձնական միտումներ, համակրութիւններ, հակակրութիւններ. դրա համար կան ժամուլ և այլ ճանապարհներ, այլ ասպարէզներ:

զ) Մենք կամենում ենք, որ դպրոցում լինեն պարտաճանաչ հոգաբարձուներ, հմուտ, իր պաշտօնին արժանի տեսուչ և արժանաւոր ուսուցիչներ, իսկ թէ դրանք քաղաքական ի՞նչ համոզմունք ունեն—դա մեզ և մեր երեխաներին չէ վերաբերում:

Ահա մեր, որպէս ծնողների, ցանկութիւնը, կամքը: Դըպրոցը մի դարձնէք զանազան կուսակցական ինտրիգների բոյն, ուր դուք ցանկանում էք ձեր կուսակցական հաշիւները տեսնել:

Այդպիսով դուք կառաջացնէք նոր բարդութիւններ, որոնցից արդէն զգուել է հասարակութիւնը: Այս եմ մտածում ես, այս են մտածում ինձ հետ միասին և բոլոր իսկական ծրարողները և այս վերաբերում է և ձեզ, պ. Լ. Սարգսեան, և ձեզ, պ. պ. նորընտիր հոգաբարձուներ:

Երկուսիդ մէջ մենք մանկավարժական ծրագրի, ուղղութեան և համոզմունքների տարբերութիւն չէ, որ տեսնում ենք այլ անձնական, կուսակցական հաշիւներ: Դուրս գեցե՛ք այդ բոլորը դպրոցից և սկսէ՛ք կրթական մեծ և սուբ գործը:

Ի դիմաց մի խում ծնողների

Ե. Տէր-Սարգսեանց

Դարձեալ Մ.-Յովն. Օր. Ուսումնարանի մասին

(Նամակ խմբագրութան)

Կարդացի «Մշակի» № 180-ի մէջ (օգոստոսի 20-ից) «ի չիմաց ծնողները՝ Կ. Տէր-Սարգսեանցի» նամակ խմբագրութեան գրուածքը, որ առիթ է տալիս ինձ դարձեալ խօսել այդ ուսումնարանի մասին, մանաւանդ որ առաջին իմ բացատրութիւնից յետոյ, որ տպուած էր «Մշակի» մէջ յուլիսի 7-ին, հարցը ստացել է այժմ նոր կերպարանք, բանակոտիւնների շնորհիւ:

Թող ներեն ինձ պ. պ. ծնողները, եթէ իմ այս բացատրութեան մէջ գտնեն բուն հարցից մի քանի շեղումներ, որոնք անհրաժեշտ են, քանի որ պ. Ե. Տէր-Սարգսեանցը իմ մէջ ևս տրամադիր է գտնել ինչ-որ զուտակցական և անձնական հաշիւներ» այդ ուսումնարանի շուրջը ծագած պայքարի մէջ: Դա մեծ թիւրիմացութիւն է:

Եւ 1894 թուականին հրաժարուցի Շուշու թեմական դպրանոցի տեսչական պաշտօնից և հեռացայ, որովհետև համոզուցի, որ կղերական բիւրօկրատիան, յենուելով էջմիածնում բուն դրած կամարիլիայի վրայ, ամէն կերպ աշխատում է խոչընդոտներ դնել իմ գործունէութեանը այդ դպրոցում: Հակառակութիւնը իսկապէս ծագել էր նրանից, որ ես իբրև տեսուչ բարձր էի պահում մանկավարժական ժողովի և հոգաբարձութեան հեղինակութիւնը առաջնորդի և նրա արբանեակների փառայական ոտնձգութիւնից և, բացի այդ, պահանջում էի հոգաբարձութեանը յանձնել դպրոցի ընդարձակ կալուածների տնօրինութիւնը և այդպիսով բարձրացնել թեմական դպրոցի եկամուտները: Առաջնորդը պէտք է հեռացնէր ինձ, որպէսզի շարունակէ իր անկօնտրօլ կամայականութիւնները: Իմ բուն տեսչական գործունէութեան դէմ ոչինչ չը կարողանալով ասել, առաջնորդը իր արբանեակ սև հարիւրեակով հնարեց միջնադարեան ինկվիզիցիայի մի հալածանք. մէջ եկաւ «Յոննան մարգարէի և կէտ ձկան» «գալթակոցուցիչ» առասպելը:.

Հետանալով «ազգային-եկեղեցական» ուսումնարանների ասպարէզից, կոնդակների բանադրանքների հետ, ես հետս տարայ մի որոշում. երբէք ոտս չդնել այդ հաստատութիւնների

մէջ, քանի դեռ այնտեղ տիրող կը հանդիսանայ կղերական-քմահաճոյքը:

Եկաւ Ռուսաստանի մեծ յեղափոխութիւնը, որ տապալեց և հայ կղերի գերիշխանութիւնը: Ո՛չ հայ գործիչներէ ջանքերով տապալոււմ էր և հայկական կեանքի կղերական փաշայականութիւնը: Թոււմ էր, թէ մենք ևս վերածնունդ մը եմք:

Մայիսի վերջերում մի յարգելի անձնաւորութիւն, որ վաղուց հեռացել է մանկավարժական ասպարէզից և ինձ ճանաչում է իբրև նախկին պաշտօնակից, ոչ մի անձնական շահով կապուած չլինելով Յովնանեան ուսումնարանի հետ, բայց նրա բարօրութեան ամենաանկեղծ նախանձախնդիրն հանդիսանալով, յատուկ եկել էր և ինձ աշխատում էր համոզել՝ դնել իմ թեկնածութիւնը այդ ուսումնարանի տեսչական պաշտօնի համար: Նա գիտէր, որ ես մի տարի առաջ մերժել էի Ալէքսանդրոպոլի առևտրական ուսումնարանի (կոմբըշ. ուչիւ.) դիրեկտորի պաշտօնը, որ հեռագրով առաջարկուած էր ինձ քաղաքագլխից: Եւ ահա այժմուր և որք աղջիկների կրթութեան սիրոյն» առաջարկում էր ստանձնել տեսչական պաշտօնը Յովնանեան ուսումնարանում, որի ցաւալի վիճակը, և նրա վարժուհիների մի մասի ապրիկարութիւնը, ի դէպ ասած, կշտամբում էր այն ժամանակ և՛ «Ալիքը»... Ես դրականապէս մերժեցի իմ կողմից որևէ դիմում անել և դնել թեկնածութիւնս:

Այնուհետև յունիսի 8-ին, Գոլովինսկի պրոսպեկտում, գիշերը ժամի 10-ին, պալատի դիմաց, պատահամբ հանդիպեց ինձ պ. Ս. Յարութիւնեանը և յայտնեց ինձ այն, ինչի մասին նա ինքը հաղորդել է «Մշակում» տպուած իր նամակով: Իսկ իմ առաջին բացատրութիւնը յուլիսի 6-ից լրացնում է տեսչական հարցի ծագումը: Ուրեմն, իմ կողմից, իմ նախաձեռնութեամբ, իմ ջանքերով ոչ մի դիմում չէ արուած Յովնանեան ուսումնարանում պաշտօն ստանձնելու նպատակով: Եւ եթէ ուսումնարանի Խորհուրդը և նրա հոգաբարձուն, ունենալով ուրիշ թեկնածուների անուններ, այնուամենայնիւ ինքը իր յօժար կամքով միաձայն որոշել է ինձ ընտրել տեսուչ, առանց նախօրօք տեղեկացնելու մասին դաշնակցական «Բիւրօյին», և ապա ներկայացրել է այդ ընտրութիւնը ի հաստատութիւն Կաթողիկոսի, ինչպէս պահանջում է հիմնադրի կտակը,— ես այդ բանում «գաղտագողի» ոչ մի արարողութիւն չեմ գտնում: Իսկ թէ ճիշտ է «աղբային բլլրօկրատիայի» ցասման և քինախնդրութեան բուն պատճառը, այդ հասկանալի է միայն նրբանց, որոնք գիտեն իմ և դաշնակցական աղաների մէջ անցած դարձածը:

Դուք, պ. պ. ծնողներդ, առում էք, թէ «կուսակցական-անձնական հաշիւներ» կան այդ պայքարի մէջ: Ճիշտ է, սակայն ոչ արդարացի երկու կողմերի նկատմամբ: Եւ պէտք է պարզել այդ թիւրիմացութիւնը: Թող ամեն բան լինի պարզ և աշխարհ. միայն գողն է վախենում լոյս ցերեկից և բռնակալը՝ ազատ խօսքից: Ասացէք խնդրեմ, կարելի է, օրինակի համար, ուսու կամ թիւրք բիւրօկրատիան ամբողջապէս վերցրած «կուսակցութիւն» անուանել. դա որոշ սիստեմի, բեթիմի մէջ շահագրգռուած խայտաբղետ անհատներու մի ընկերակցութիւն է և ոչ կուսակցութիւն: Կարելի է այն բոլոր մարդկանց, որոնք քաջութիւն ունեն բողոքելու այդ բիւրօկրատիաների բռնութիւնների դէմ, «կուսակցական, անձնական հաշիւներ» մէջ մեղադրել: Դուք, անշուշտ, կ'ասէք—ոչ, որովհետեւ իւրաքանչիւր շիտակ քաղաքացու բարոյական պարտքն է բողոքել բռնութեան դէմ. այլապէս զօրքանների բռնապետութեան վերջ չի լինի: Այդպիսի բողոքները միշտ իրանց վրայ են գրաւուել անկօնտրոլ իշխելու տինդրով բռնուած բիւրօկրատիաների ցատուճն և հալածանքը:

Ինչո՞ւ պէտք է մեր կեանքում Դաշնակցութիւնը, շեղուելով իր բուն նպատակից և դառնալով մի անկօնտրոլ քմահաճ բիւրօկրատիա առանց միջոցների խտրականութեան սկզբունքով, պէտք է բացառութիւն կազմէր: Բիւրօկրատիաները ամեն տեղ նման սիստեմով և միջոցներով են գործում: Դադափար կազմելու համար դաշնակցական բեթիմի մասին կարգացէք հէնց ծնողներիդ նամակից մի քիչ վերև շարուած տողերը նոյն «Մշակում», եթէ ձեզ ծանօթ չեն հազարաւոր այլ փաստեր: Կարգացէք և մի սոսկաք իբրև քաղաքացի, իբրև հայ: Եթէ դուք մոլորուած չէք և դաշնակցական անգիտակից խուժանին չէք պատկանում, պէտք է որ աղաղակէք. «Հերիք է, հեռացէք ասպարէզից»:

Արդ, այդ բաշխողուկ բեթիմի դէմ մաքառողը միթէ պէտք է ղեկավարուի անպատճառ ինչ-որ «կուսակցական, անձնական հաշիւներով»:

Մի Կարապետ եպիսկոպոս Այվազեանի և իր արքանեակներին, իսկ այժմ դաշն. «բիւրօյի» փաշայական քմահաճոջների դէմ կռուելով՝ բացի անձնական անախորժութիւններից և զրկանքներից ի՞նչ շահ ես պէտք է ունենայի: Բաւական է, որ ես մի քիչ համակերպուէի, «բալի» ասէի, որ ազատուած լինէի զալմաղաներից և իմ անձնական բաներս զբոստէի... Սակայն կան մարդիկ, որոնք անկարող են համակերպուել և լուռութեամբ տանել բռնութիւնն ու անարդարութիւնը, թէև գիտեն, որ այդ

յանդգնութեան հետեանքը անձնական տեսակէտներով բաւական անախորժ է...

Այո, կուսակցութիւններ եւ ճանաչում եմ, սակայն կան բաներ, որ իւրաքանչիւր շիտակ քաղաքացի պէտք է ըմբռնէ, անկախ՝ կուսակցական դաւանանքներից, եթէ նա ֆանատիկոս աղանդաւոր չէ, եթէ նա միջոցների անխորականութեան հետևող չէ: «Ածուխը սև է, մածունը սպիտակ».—միթէ այդ ճշմարտութիւնները խոստովանուելուց առաջ պէտք է տեղեկանալ, թէ ինչ է հրամայում կուսակցութիւնը կամ մեր «տէր ու տնօրէնը»—«բիւրօն»:

Ես մի ամբողջ տարի է բոլոր ժողովներում բողոքում եմ Դաշնակցական կուսակցութեան սխտեմի դէմ, որովհետև իմ հոգու ամբողջ էութեամբ անզօր եմ զսպել իմ ներքին ձայնը. տեսնելով մի խումբ խելագար, իմաստակ և ապիկար քեալագեօզների խողերը՝ «կառավարութիւն» դառնալու: Դա բիւրօկրատիական մի համաճարակ, մի պսիխոզ է այդ պարոնների կողմից: Մամուլի մէջ ես բողոքեցի այդ ազգային նոր ցաւի դէմ այն ժամանակ, երբ Յոջնանեան ուսումնարանի տեսչական խնդրի մասին ոչ մի ձայն չկար: Կարդացէք, խնդրեմ, ապրիլի 22-ին գրած «Նպատակը արդարացնում է միջոցները» յօդուածս «Մուրճում» (№ 4—5, էր. 126—135), «Մօտիկ անցելից» գրուածքը նոյն համարում և դուք կը հասկանաք «բիւրօի» մարդուկների քինախնդրութեան և կատաղութեան պատճառը: Կարդացէք ամսագրի յաջորդ համարում մայիսի 27-ից «Կայծ»-ին նուիրած տողերը և դուք կը հասկանաք շատ բան, ինչպէս և այն, թէ ինչո՞ւ գաղտնի բօյկոտ էին յայտնել «Մուրճին»: Թոյլ տուէք առաջ բերել մի քանի տողեր միայն, որպէս զի ցնդուի այն սուտը, որ իբրև թէ իմ կռիւը այդ բիւրօկրատների դէմ սկսուեց տեսչական հարցից յետոյ: Ահա ինչ էր գրած, մայիս ամսում, դաշնակց. բիւրօկրատների հասցէին «Մուրճում».—«Մեր մէջ դժբախտ ներքին և արտաքին հանգամանքների շնորհիւ առաջ եկած ազգային յեղափոխական կազմակերպութիւնները կամաց-կամաց իւրացրին «Նպատակը արդարացնում է միջոցները» սկզբունքը և մեծ մասամբ դառան վերջ ի վերջոյ կոնսպիրատիւ ասիական բիւրօկրատի»՝ նրա բոլոր հրէջաւոր պակասութիւններով. այդ տեսակ յեղափոխական բիւրօկրատիայի» գոյութեան մէջ շահագրգռուած կամ յաճախ մոլորուած ու միամիտ մարդիկ չեն կարողանում տեսնել և լսել այն ազդակող բունութիւնների ու զեղծումների մասին, որ ամեն օր կատարում են հայ ժողովրդի գլխին զա-

նազան տգէտ, արիւնոռւշտ, վայրենի և բիրտ ոյժեր և անբարոյականացնում նրան»:

Արդեօք ցնդուեց «Ալիբի» սփռած մշուշը և հնարած առասպելը տեսչական հարցիս մասին, թէ ոչ...

Իբրև հրապարակախօս, իբրև շիտակ քաղաքացի և իբրև հայ՝ «ազգասիրաբար» լռել, տեսնելով անարեկուած ժողովրդի ազատութեան ամենատարրական իրաւունքների բիրտ ոտանահարում, լսել այդ հայկական փոքրիկ Պլեվէների ինքնահաւան խօսքերը, թէ նրանք «այդ կերպ կրթում են փշացած հայ ժողովուրդը», լսել այդպիսի դաստիարակներից, թէ «դեռ լաւ է, որ ձեռից, բանտից, արսորից բացի կախաղաններ էլ չենք բարձրացնում» *) հայ ժողովրդին, Դաշնակցութեան ցանկացած դրեսսիրովկայի տակից անցկացնելու նպատակով,—այդ բոլորից յետոյ լռել նշանակում է բարոյապէս փշացած սինխրօր լինել, ստրկահոգի կարիքերիստ լինել, Յրէյլինսկայա փողոցում ապաստանած աղաների հացկատակը հանդիսանալ թող այդպէս վարուեն, ովքեր կարող են:

Հասկանալի է, որ մեր կեանքի տէր ու տնօրէն՝ դառած դաշնակցական աղաների ու փաշաների հասկացողութիւններով պէտք էր յարմար առիթ գտնել «ոչնչացնելու աներես համարձակութիւն» ունեցողին: Այդ ընդգծուած խօսքը լսող վկան կենդանի է, իսկ միւս երկու խօսքերը տպուած են «Ձանգի» մէջ:

Եւ անա մեր ազգային Պլեվէները յարմար առիթ համարեցին Յոֆմանեան ուսումնարանի տեսչական հարցը, որ և դառաւ նրանց համար casus belli: Հեռացրուած վարժուէիների բողոքը, Մոզնու եկեղեցու մի քանի ծխականների տրտունջները հին հոգաբարձութեան դէմ և ուսուցչական ծաղրուած համագումարի թեթևամիտ բոյկոտը՝ չափազանց նպաստաւոր պայմաններ էին մեր հուրօպատկիւնների աչքում, և կռիւ յայտարարուեց մի հատիկ անձի դէմ ամբողջ կազմակերպութեան քրեւոթի կողմից: «Ալիբի» միջից ինձ վրայ նետեցին ինսինուացիաներով, ստերով և զրպարտութիւններով լիք ոււմբեր իրար յետևից երկու անգամ: Եւ ես պատասխանեցի երկու վրիպած ոււմբերի դէմ «Ալիբի մանեօվրները» յօդուածովս: Ուրեմն նախայարձակը Յոֆմանեան ուսումնարանի խնդրում, պ. Միքայէլ Յովհան-

*) Եւ այդ ասողը գերմանական կրթութիւն ստացած մի բրժիշկ էր. այդ բրժիշկը պէտք է նախ ինքը բուժուէր հոգեկան հիւանդութիւնից. կիզծ յեղափոխական փսիխոզից և ապա հոգ տանէր հայ ժողովրդի մասին...

նիսիեան, ձեր «Ալիքն» էր և ես միայն պատասխանում էի: Բայց թողնենք այդ:

Ես շեղուեցի, որովհետև դրսի մարդկանց համար պարզ չէր դաշնակցական աղաների և փաշաների կռիւ նետուելու շարժառիթները: Թօլը պատուեց «Ալիքի» մանկավրնները՝ յօղուածովս:

Այնուհետև իմ անձի դէմ մաքառելը դառել էր դաշնակցական բերօղրատիայի միակ նպատակը Յոզիանեան ուսումնարանի գործում. նրանց ինչ, թէ ինչ կը լինի ուսումնարանի հետ. ամեն ընդհանուր պէտք է զոհել վրէժխնդրութեան: Ես կարող եմ տասնեակ վկաններ բերել, որոնց առաջ այդ աղաները խոստովանել են իմ անհաշակաւ ընդունակութիւնների մասին, նոյն իսկ ասել են, թէ եթէ իմ քննադատական վերաբերմունքը չլինէր դէպի այդ շէֆերը, այն ժամանակ նրանք մտադիր էին հրաւիրել ինձ տեսուչ Ներսիսան դպրոցում... Բայց այժմ չափազանց անբարեոյս եմ (неблагонадежный) ճանաչուած ազգային պօլիցիայի և բերօղրատիայի աչքում...

Թէ որ աստիճան ես հետու էի Յոզիանեան ուսումնարանի հարցում «կուսակցական կամ անձնական հաշիւներից», այդ երևում է իմ առաջին բացատրութիւնից, որ գրուած էր այն ժամանակ, երբ դեռ ուսմբեր չէին նետուած «Ալիքի» էջերից իմ հասցէին և իմ մտքով չէր անցնում, թէ այդ բերօղրատների հոգու աղքատութիւնը կարող է հասնել անհեթեթութեան Հերկուլէսեան սիւներին, և նրանք Յոզիանեան ուսումնարանը իրենց «կազմակերպութեան» սխալագործութիւնների առարկայ կը դարձնեն: Բայց իրականութիւնը գերազանցեց իմ յոռետեսութիւնը այդ պարոնների նկատմամբ: Ինչպէս երևի յիշում են պ. պ. ծնողները, ես, ծանօթանալով ուսումնարանի խճճուած հարցերի հետ, հէնց առաջին անգամից յայտնել էի այն միտքը, որ դպրոցը սումբուրից ու քասուից դուրս բերելու միակ ելքը նոր հոգաբարձութեան ընտրութիւնն է: Ես հաւատացած էի, որ մինչև օգոստոսի 1-ը կարելի է գլուխ բերել այդ ընտրութիւնները: Եւ այդ նորընտիր հոգաբարձութեան ես պատրաստ էի առաջարկել իմ վերընտրութեան հարցը: Սակայն օգոստոսի 10-ին պատուիրակների ժողովը և մինչ այդ պատուիրակների ընտրութիւնների ամբողջ պատկերը ցոյց տուին, թէ կրքից կուրացած բերօղրատները իրանց խուժանի միջոցով ինչպէր չեն անիլ: Երեք եկեղեցիների մօտ 8 հազար իրաւատէր ծխականներից մասնակցել էին մօտ 200 հոգի որոնցից 120 դաշնակցական խուժանից, որ և ընտրել էր բերօյի նշանակած մարդկանց: Այդ

բաւական չէ. «ընտրուած» պատուիրակներէց 9 հոգի իրանց էին վերապահել նաև կեղծել ընտրողներէ կամբը. իբր այդպիսին յայտարարելով այն մանդատը, որ թելադրել էր բերւածն»։ Միթէ այսպիսի կեղծիքով արտայայտուած «ժողովրդի կամբը» մի շանտաժ չէ։ Միթէ այսպիսի «ընտրեալներէ» առաջ ես պիտի կոմեդիա խաղամ, ղնելով իմ վերընտրութեան» հարցը, թէկուզ այդ լինի իմ դրած պայմանաժամից մի ամիս էլ անց։ Ոչ, ես կոմեդիա խաղալու ոչ մի ախորժակ չունիմ և եթէ հասարակութիւնը այնքան ճնշուած է, որ այդպիսի ընտրութիւններին բարոյական սանկցիա է տալիս, ես ձեռներս լուանում եմ այդ ինքնասպանութեան գործում...

Տեսնելով, որ այժմ մեր ուսումնարանները ազատուել են կղերական բիւրօկրատների ճանկերից, ընկել են աւելի ևս բիրտ և քմահաճ ռզգային բիւրօկրատների բռունցքների մէջ, — ես անկարելի եմ համարում արդիւնաւոր գործունէութիւն այդ ասպարէզում, բնաւ չուզենալով օգտուել այդ փաշաների ֆալօրիտիզմից։

Մինչ խորհրդի «ընտրովի» անդամներ հաստատութիւնը ես վարել եմ և վարում եմ իմ պաշտօնը սկսած յուլիսի 1-ից, նախապատրաստական աշխատանքներ կատարելով առաջիկայ ուսումնական տարուայ համար։ Ձեր զաւակները կ'օգտուեն այն հիմնական բէժօնտներից, որ իմ խնդիրքով կատարել տուեց Սորհուրդը։ Իմ նախապատրաստական զբաղմունքների ժամանակ ես տեսայ, թէ իսկապէս որ դասակարգի համար է այդ կրթական հաստատութիւնը։ Եւ խոր վիշտ էր համակում ինձ, երբ ես տեսնում էի որք և չքաւոր երիտաններին և աչքս դարձնում այն նեղսիրտ և կոյր մարդուկների վրայ, որոնք պատրաստ են ամէն ինչ զոհել իրանց կիրքը յագեցնելու համար։ Երբ տեսնում էի ուսումնարանի հարցով «հետաքրքրուող» կողմնակի և պատահական անձանց, իսկ մի կողմ քաշուած անձայն ծնողներին... Միութարական էր, վերջապէս կարող Երեսնորդների մի մասի նամակը, իբրև զարթնած գիտակցութեան առաջին արտայայտութիւն, շահագրգռուած վարժուհիների, թեթևալիկ «մանկավարժների» և դաշնակցական ազանների ստեղծած այս սնմիտ ու վայրագ ժխորի մէջ։ Սակայն ծնողների այդ ձայնը չափազանց թոյլ է և նա չէ բողոքում ընտրողական այն կեղծիքի դէմ, որ կայացրել են մեր դաշնակցական բիւրօկրատները, որոնք կարող են միայն փչացնել ամեն մի հասարակական գործ, որին մեկնում են իրանց ապիկար ձեռները։

Հետոն Սարգսեան